ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1963 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԱՎԱԳԱԳՈՒՅՆ ԹՈՒՐՔԱԳԵՏԸ

Մայիսի 20-ին գիտությունների ակադեմիայի դահլիճում տեղի ունեցավ մեծարման երեկո՝ նվիրված Հայկական ՍՍՌ ԳԱ արևելագիտության սեկտորի ավագ գիտաշխատող Արամ Խաչատուրի Սաֆրաստյանի ծննդյան 75 և գիտա-մանկավարժական գործունեության 50-ամյակին։

Սաֆրաստյանը ծնվել է 1888 թվականին Վանում, ուսուցչի ընտանիքում։ Սովորել է քաղաքի հայաբնակ թաղամասի՝ Այգեստանի միջնակարգ կենտրոնական դպրոցում, որն ավարտելուց հետո նա մանկավարժական աշխատանք է տանում Վանի Հայկուսյերի դպրոցում, իսկ այնուհետև Աղթամարի վանքի, Բայազետի և Շարին-Կարահիսարի դպրոցներում։ 1911 թ. նա մեկնում է Ստամբուլ և ընդունվում Ստամբուլի բարձրագույն մանկավարժական ինստիտուտի հումանիտար գիտությունների ֆակուլտետը, որը շուտով միանում է Ստամբուլի համալսարանի հումանուն ֆակուլտետի հետ։ 1915 թ. գերազանց դիպլոմով ավարտելով համալսարանը, Սաֆրաստյանը ստանում է Թուրքիայի միջնակարգ դպրոցների մասնագետ-ուսուցչի կոչում և աշխատանքի անցնում Բերա թաղամասի Ղալաթասարայի լիցեյում, որտեղ նա ավանդում է 1915—1917 թթ.։ Մնալով Թուրքիայում այդ մղձավանջային տարիներին, երբ երիտթուրքական կառավարությունը, պատերազմի առիթն օգտագործելով, իրականացնում էր արևմտահայության իսպառ բնաջնջման անմարդկային, բարբարոսական ծրագիրը, Արամ Սաֆրաստյանը մոտիկից ապրում է հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունը, իր բարեկամների, մտերիմների ու հարազատների անլուր տառապանքները։ Ճիշտ է, նրան հաջողվում է խուսափել Ստամբուլի հայ մտավորականության չարաննենգ մաքրագործումից, սակայն նա ևս ենթարկվում է սոսկալի հալածանքների՝ մշտապես զգալով աքսորի վտանգը։ Սաֆրաստյանը ևս ընկնում է թուրք ոստիկանության ճանկը և հազիվ թե ազատվեր աքսորից, եթե նրան և իր հետ ավարտած 15 հայ ուսանողներին չհովանավորեր համալսարանի դասախոս Իսլամայիլ Հաքքը բեյը։ Այս վերջինը, որը ինչպես հիշում է Արամ Սաֆրաստյանը, ազնիվ մարդ էր և լավ գիտնական, չէր թաքցնում իր համակրանքը հայ ժողովրդի և մասնավորապես հայ ուսանողների նկատմամբ, իսկ հայերի աքսորն ու ոչնչացումը համարում էր «բարբարոսություն և հրեշային արարք», որի համար,—ասում էր նա,—«ես ամաչում եմ իբրև թուրք»...

1919 թվականի սեպտեմբերին Սաֆրաստյանին հաջողվում է ազատվել Ստամբուլի կոշմարային մթնոլորտից և մի խումբ մտավորականների հետ անցնել Անդրկովկաս՝ սկզբում Երևան, իսկ մի տարի հետո՝ Թիֆլիս, ուր նա մշտական բնակություն է հաստատում։

Վրաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Արամ Սաֆրաստյանի համար Թբիլիսիում ստեղծվում են արդյունավետ աշխատանքի բարենպաստ պայմաններ, նա հնարավորություն է ստանում իր գիտելիքներն ու փորձը հաղորդելու երիտասարդությանը, ինչպես նաև զբաղվելու ժուռնալիստական և գիտական աշխատանքով։ Երբ 1922—1923 թթ. սկսվեց արա-

բական տառերից հրաժարվելու շարժումը, Արամ Սաֆրաստյանը այդ գործի առաջին շարքերում էր։ Նա ակտիվ մասնակցություն է ունենում Թբիլիսիում նոր ադրբեջաներեն տառերով լույս տեսնող «Յենի յոլ» թերթին և «Դան յըլդըզի» ամսագրին, որպես վերջինիս պատասխանատու քարտուղար։

Շուտով նա ընտրվում է Վրաստանում նոր ադրբեջանական տառերի կոմիտեի անդամ-քարտուղար։ 1926 թվականին Սաֆրաստյանը մասնակցում է Բաքվում գումարված Համամիութենական թուրքագիտական կոնգրեսին՝ իբրև Վրաստանի պատգամավոր։

1924 թվականին Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի (ЗКУ) ռեկտոր Սարգիս Կասյանի հրավերով Արամ Սաֆրաստյանը աշխատանքի է անցնում հիշյալ համալսարանում, ուր մինչև 1935 թ. դասախոսում է հասարակական ձևերի զարգացման պատմությունը՝ ադրբեջանական սեկտորում։ Միաժամանակ, 1926—1935 թթ. նա դասախոսական աշխատանք է տարել Թբիլիսիի ադրբեջանական տեխնիկումում։ Այս ժամանակամիջոցում Սաֆրաստյանը աճեցրել, դաստիարակել է հարյուրավոր ադրբեջանցի երիտասարդների, որոնցից շատերը հետագայում դրսևորել են իրենց տարբեր բնագավառներում։ Բավական է հիշատակել, որ ադրբեջանական տեխնիկումում ավարտած Սաֆրաստյանի սաներից են Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Զահիդ Խալիլովը, Բաքվի պետական համալսարանի դասախոս Հասան Խեյրին, Թբիլիսիի պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս բանաստեղծ Զիյա Էֆենդիևը և ուրիշներ։ 1937—1947 թթ. Սաֆրաստյանը դասախոսել է Թբիլիսիի պետական մանկավարժական ինստիտուտի հայկական և ադրբեջանական սեկտորներում, մի շարք հիմնարկներում կազմակերպել և գլխավորել է թուրքերեն ժամանակակից լեզվի ուսուցումը։

Մանկավարժական բեղուն գործունեության հետ մեկտեղ Սաֆրաստյանը գիտահետազոտական մեծ աշխատանք է տանում Թբիլիսիի մի շարք գիտական հիմնարկներում։ 1936—1937 թթ. նա աշխատում է Կովկասագիտության ինստիտուտի թուրքագիտության բաժնում՝ գիտական աշխատակցի պաշտոնում, ինչպես նաև հիշյալ ինստիտուտին կից ստեղծված արևելագիտական ասոցիացիայում, որը նպատակ էր դրել ուսումնասիրել ռեսպուբլիկական Թուրքիայի պատմությունը։ Այդ տարիներին էլ Սաֆրաստյանը սկսում է աշխատել իր թեկնածուական դիսերտացիայի վրա՝ «Թուրքիայի երկաթուղային տրանսպորտի շինարարության պատմությունը» թեմայով, որը նա հաջողությամբ պաշտպանեց Թբիլիսիի պետական համալսարանում 1948 թվականին։

Վրաստանում գտնվելու տարիներին Սաֆրաստյանի ձեռնարկած կարևոր հետազոտություններից մեկը նրա աշխատանքն է թուրքական աղբյուրների գիտական ուսումնասիրության ուղղությամբ։ Այդ բարդ, բայց և մեծապես շնորհակալ աշխատանքը սկսելով, Սաֆրաստյանը պետք է հաղթահարեր մի շարք դժվարություններ, չէ՞ որ այն իր նախադեպը չուներ. ոչ ոք մեր պատմագրության մեջ հատուկ չէր զբաղվել թուրքական միջնադարյան աղբյուրները կարդալու, վերծանելու, թարգմանելու և գիտական շրջանառության մեջ դնելու խիստ կարևոր խնդրով։ Այստեղ պետք է նշել նաև, որ Սաֆրաստյանը այդ գործը սկսում է միայնակ, իր սեփական նախաձեռնությամբ և միջոցներով։ Նա մեկնում է Մոսկվա, Լենինգրադ, որտեղ պրպտումներ անելով գտնում է 16—17-րդ դարերի թուրք պատմագիրների մի շարք արժեքավոր, բայց անուշադրության մատնված գործերը, որոնք հատկապես վերաբերում են հայ ժողովրդի պատմությանը, դեպի Անդրկովկաս Թուրքիայի ձեռնարկած նվաճողական արշավանքներին և այլն։

Դժբախտաբար, Սաֆրաստյանի այս կարևորագույն գիտական գործունեությունը անսպասելիորեն ընդհատվում է։ Շուրջ յոթ տարի թուրքագետ-գիտնականը զրկվում է իր նախընտրած մեծարժեք զբաղմունքից անարդարացի կերպով ընտանիքի հետ միասին աքսորվելով Ալթայի երկրամաս. անհատի պաշտամունքի շրջանում տեղ գտած անօրինականություններից տուժում է նաև Սաֆրաստյանը։

1955 թ. Արամ Սաֆրաստյանին հաջողվում է վերականգնել իր իրավունքները։ Նա գալիս է Հայաստան, մշտական բնակություն հաստատում Երևանում և հնարավորություն ստանում շարունակելու իր ընդհատված աշխատանքը։ 1958 թ. հոկտեմբերին Հայաստանի գիտությունների ակադեմիայի սիստեմում կազմակերպված արևելագիտության սեկտորի առաջին աշխատակիցներից մեկը Արամ Սաֆրաստյանն էր։ Շատ շուտով նա դառնում է այդ երիտասարդ կոլեկտիվի ամենասիրելի և հարգված ընկերը, բարեկամը, խորհրդատուն։ Այստեղ էլ առա-

չին տոգամ նրա համար ստեղծվում են նորմալ, միանգամայն բարենպաստ պայմաններ գիտական աշխատանքի համար։ Արդեն հաջորդ տարում, 1959 թ. Սաֆրաստյանը տպագրության է հանձնում բազմամյա արգասավոր աշխատանքի անդրանիկ ծավալուն գործը՝ «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» արժեքավոր աշխատության 1-ին հատորը, որը լույս տեսավ 1961 թ., գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ։ Հիշյալ ժողովածուում զետեղված նյութերը, որոնք վերաբերում են 17—18-րդ դարերին, ցույց են տալիս օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Կովկասում և մասնավորապես, պատմական Հայաստանում, ինչպես նաև անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական պայքարը թուրք զավթիչների դեմ նշված ժամանակաշրջանում։ Թուրք պատմագիրների (գերազանցապես արքունական) գրքերից թարգմանված հատվածները, որոնք հավաքված են այդ ժողովածուում, այժեքավոր են ամենից առաջ նրանով, որ ակամայից մերկացնում են ժամանակակից թուրք պատմաբանների կողմից հետևողականորեն պրոպագանդվող այն կեղծիքը, թե իբր անցյալում օսմանյան կայսրությանը հպատակ ժողովուրդներն իրենց պետականության և կուլտուրայի զարգացման ներկա աստիճանին են հասել բացառապես սուլթանական կառավարության հովանավորության և բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ։ Սուլթանական թեկուզ պաշտոնական պատմագիրների բերած նյութը անհերքելիորեն վկայում է այն մասին, որ օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների, առանձնապես հայ ժողովրդի նկատմամբ վարած կողոպուտի ու կեղեքման վայրագ քաղաքականությունը զգալիորեն կասեցրել է նրանց պատմական առաջընթացը։

Շարունակելով իր քրտնաջան աշխատանքը, Ա. Սաֆրաստյանը հրատարակության հանձնեց այդ արժեքավոր աշխատության 2-րդ հատորը և ներկայումս աշխատում է 3-րդ հատորի վրա, որը նույնպես շուտով կավարտվի։

Միաժամանակ նա Մ. Ջուլալյանի հետ միասին պատրաստել ու հրատարակության է հանձնել մի արժեքավոր գործ ևս՝ «Օսմանյան կայսրության օրենսդրական ակտերը (կանոնամեներ)», որն ընդգրկում է թուրք պատմաբան Օ. Լ. Բարկանի ստվարածավալ աշխատության առաջին հատորից քաղված այն օրենքները, որոնք վերաբերում են օսմանյան կայսրության հայկական վիլայեթներին։ Հիշյալ ժողովածուն հետաքրքիր և արժեքավոր նյութեր է պարունակում Թուրքիայի 16-րդ դարի պատմության, Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի, հողային սիստեմի և այլ հարցերի վերաբերյալ։ Սաֆրաստյանը տպագրության է հանձնել նաև «Թուրք ճանապարհորդ Էվլիյա Չելեբին Հայաստանի և հայերի մասին» կարևոր աշխատությունը։

Սակայն թուրքական միջնադարյան աղբյուրների թարգմանության և հրատարակության հսկայական աշխատանքով չի սահմանափակվում Սաֆրաստյանի գիտական գործունեությունը։ Նրան հավասարապես հետաքրքրում են ժամանակակից Թուրքիայի պատմության հարցերը և, մասնավորապես, ժամանակակից թուրք պատմագրությունը, որը կոպիտ կերպով խեղաթյուրում ու նենգափոխում է օսմանյան կայսրության դաժան լծի տակ դարեր շարունակ տառապած մեծ ու փոքր ժողովուրդների պատմությունը։ Այս ուղղությամբ Սաֆրաստյանի կատարած աշխատանքներից է Ե. Ղ. Սարգսյանի հետ միասին ձեռնարկած ժամանակակից թուրք պատմաբանների «գիտական» աշխատությունների քննությունը՝ հայ ժողովրդի պատմության լուսաբանման տեսանկյունից։ Այդ հարցին է նվիրված արևելագիտության սեկտորի «Արևելագիտական առաջին ժողովածուում» տպագրված «Պատմության հակագիտական լուսաբանման մի քանի փաստերի մասին» արժեքավոր հոդվածը, որով ըստ էության, սկիզբ դրվեց մի շատ կարևոր աշխատանքի՝ ժամանակակից թուրք պատմագրության հատուկ ուսումնասիրությանը, նրա պանթուրքական, հակագիտական կոնցեպցիաների ու մոլի շովինիստական գաղափարախոսության քննական վերլուծությանն ու մերկացմանը։

Իր գիտական բեղմնավոր աշխատանքին զուգահեռ, Ա. Սաֆրաստյանը արևելագիտության սեկտորի կազմավորման հենց սկզբից հոգում է իր բազմահարուստ փորձն ու գիտելիքները երիտասարդ գիտաշխատողներին փոխանցելու մասին։ Գերազանց տիրապետելով ինչպես ժամանակակից, այնպես էլ միջնադարյան թուրքերենին, նա եռանդուն աշխատանք է տանում, ղեկավարելով թուրքերեն լեզվի ուսումնասիրությունը սեկտորում։ Սաֆրաստյանի՝ հմուտ և հոգատար մանկավարժի ջանքերի շնորհիվ է, որ արևելագիտության սեկտորի մի շարք գիտաշխատողներ այսօր ինքնուրույն կերպով օգտվում են թուրքական աղբյուրներից, մամուլից ու

գրականությունից և շարունակում են ամրապնդել ու խորացնել թուրքերեն լեզվի իրենց գիտելիքները։

Չնայած իր պատկառելի տարիքին, Ներունազարդ գիտնականը աշխատում է երիտասարդական եռանդով ու նախանձելի ոգևորությամբ։

Հայաստանի արևելագետները ջերմորեն ողջունում են Արամ Խաչատուրի Սաֆրաստյանին, ցանկանում նրան երկար տարիների կյանք և իր գիտական բոլոր մտահղացումների իրականացում։

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ